

*ԿՀավելված*

Հաստատված է՝

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ Խորհրդի  
09.06.2010թ. թիվ որոշմամբ

**«ԱՐՑԱԽ ՀԷԿ»  
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-Ի ԿՈՂՄԻՑ ԱՆԿԱՆ ԱՌԴԴՏՈՐԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ  
ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ**

**Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ**



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....	3
ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑԿՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ .....	3
ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԿՆՔԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ .....	3
ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ.....	3
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ.....	4
ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑԿՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ .....	4
ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՍԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ .....	5
ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ .....	6
ՉԿԱՅԱՑԱԾ ԵՎ ԱՆԿԱԿԵՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ .....	6
ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....	7
Հավելված 1 .....	8
Մրցութային հանձնաժողովի կազմը.....	8
Հավելված 2 .....	8



## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով կարգավորվում են «ԱՐՅԱՆ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսա-տնտեսական գործունեության ամենամյա ստուգման նպատակով անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության համար ընկերության կողմից կազմակերպվող հրապարակային մրցույթների անցկացման հետ կապված հարաբերությունները:

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

2. Հրապարակային մրցույթի մասնակիցների ընտրությունը պայմանավորված է հետևյալ պահանջներով՝
  - աուդիտորական կազմակերպության՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, Հայաստանի Հանրապետությունում և/կամ միջազգային ճանաչմամբ (հեղինակությամբ).
  - առնվազն 3 տարվա աուդիտորական աշխատանքի փորձով (Ընդ որում, 3 տարվա աուդիտորական աշխատանքի փորձի պահանջը չի տարածվում միջազգային ճանաչում ունեցող (ըստ եկամտաբերության, կատարված աշխատանքի ու հաճախորդների ծավալի լավագույն 10 աուդիտորական կազմակերպությունների շարքից) աուդիտորական կազմակերպությունների վրա).
  - աուդիտ իրականացնող խմբի ղեկավարի, աուդիտի աշխատանքներին մասնակցող աշխատակիցների որակավորման մակարդակով և աշխատանքային փորձով.

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԿՆՔԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3. Ընկերության Ընդհանուր ժողովի կողմից որպես արտաքին աուդիտ իրականացնող անձ հաստատելու պահից հրապարակային մրցույթի հաղթողը ձեռք է բերում համապատասխան պայմանագիր կնքելու իրավունք:
4. Հրապարակային մրցույթում հաղթողի հետ համապատասխան պայմանագիր կնքելիս պայմանագրի էական պայմանները պետք է համապատասխանեն հրապարակային մրցույթի մասին հրապարակային ծանուցմամբ սահմանված պայմաններին և հրապարակային մրցույթի հաղթողի հետ ձեռք բերված համաձայնություններին: Սույն կանոնակարգով նախատեսված ընկերության ֆինանսա-տնտեսական գործունեության ամենամյա ստուգման նպատակով կնքվելիք պայմանագրի ժամկետը կարող է սահմանվել առավելագույնը երեք տարի ժամկետով:

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

5. Ընկերությունը հրապարակային մրցույթի անցկացման մասին հայտարարությունը (այսուհետ՝ հրապարակային ծանուցումը) հրապարակում է նվազագույնը 1000 (հազար) տպաքանակ ունեցող թերթում, ընկերության ինտերնետային տնային էջում՝ հրապարակային մրցույթը սկսվելուց (մրցույթի հայտերի ընդունման վերջին օրվանից) առնվազն 30 (երեսուն) օր առաջ:
6. Հրապարակային ծանուցումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝
  - ընկերության անվանումը.
  - հրապարակային մրցույթի կազմակերպման վայրը (հասցեն).
  - հրապարակային մրցույթով կնքվելիք պայմանագրի առարկան.
  - հրապարակային մրցույթի հայտերի ընդունման ժամանակահատվածը.
  - մրցույթի ձևը և դրա անցկացման կարգը (մրցութային հայտերին ներկայացվող պահանջները, դրանց ներկայացման կարգը).
  - հրապարակային մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը.
  - մրցույթի հաղթողին որոշելու կարգը.
  - հրապարակային մրցույթի հայտերը բացելու, ինչպես նաև մրցույթի հայտերն ամփոփելու նիստերի օրը և ժամը.

- հրապարակային մրցույթի կանոնակարգին ծանոթանալու և/կամ կանոնակարգի պատճենը ստանալու վայրը.
  - մրցութային հանձնաժողովի հայեցողությամբ՝ այլ տեղեկություններ:
7. Հրապարակային ծանուցմամբ սահմանվում է, որ մրցույթի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որը մրցութային հանձնաժողովի եզրակացությամբ ներկայացրել է հրապարակային մրցույթի լավագույն պայմաններ և որի թեկնածությունը հաստատվել է ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովում: Հրապարակային մրցույթի ծանուցմամբ կարող է նկարագրվել հրապարակային մրցույթի հաղթողին որոշելու հատուկ արարողակարգ:
  8. Հրապարակային մրցույթի առարկան՝ համապատասխան պայմանագիրը, Ընկերությունը և մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցը պետք է ստորագրեն ոչ ուշ, քան Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընկերության արտաքին աուդիտին իրականացնող անձին հաստատելու որոշումն ուժի մեջ մտնելու պահից 15 օր:
  9. Մրցութային հանձնաժողովը հրապարակային մրցույթի հայտերի բացման օրը մրցույթի մասնակիցների ներկայացրած հայտերի ուսումնասիրությունից հետո կարող է փոփոխել հրապարակային ծանուցմամբ նախատեսված հրապարակային մրցույթի հայտերի ամփոփման օրը և ժամը՝ այդ մասին ծանուցելով մասնակիցներին:

## ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

10. Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության մրցույթ կազմակերպելու նպատակով Ընկերության Խորհուրդը ստեղծում է Մրցութային հանձնաժողով՝ հիմք ընդունելով սույն կանոնակարգի Հավելված 1-ում ներկայացված կառուցվածքը:
11. Մրցութային հանձնաժողովի աշխատանքներին կարող են ներգրավվել նաև Ընկերության այլ աշխատակիցներ:
12. Մրցութային հանձնաժողովը հաստատում է մրցույթի մասին հրապարակային ծանուցման տեքստը, բացում և գնահատում է մրցույթի հայտերը, հայտերն ամփոփաթեթով ներկայացնում է Ընկերության Խորհրդին՝ Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովին ընկերության արտաքին աուդիտին իրականացնող անձին հաստատելու առաջարկություն ներկայացնելու համար:
13. Մրցութային հանձնաժողովը պատասխանատու է հրապարակային մրցույթի ընթացքում մրցույթի անցկացման օրինականության ապահովման, հրապարակային մրցույթի կազմակերպման, ինչպես նաև նիստերի արձանագրությունների և այլ փաստաթղթերի պահպանման համար:

## ՄՐՑՈՒԹԹԻ ՀԱՅՏԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

14. Հրապարակային մրցույթին մասնակցել ցանկացող անձինք, մրցույթի մասին հրապարակային ծանուցման պահանջներին համապատասխան, առձեռն կամ փոստային ծառայության միջոցով Ընկերություն են ներկայացնում մրցույթի հայտեր:
15. Հրապարակային մրցույթի հայտով ներկայացվող տեղեկությունները և փաստաթղթերը ներկայացվում են երկու փակ, սոսնձված և կնքված ծրարներում: Ծրարներում ներառված փաստաթղթերը պետք է կազմված լինեն բնօրինակից և մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված թվով կրկնօրինակներից, որոնց վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «կրկնօրինակ» բառերը:
16. Մրցույթի հայտի առաջին ծրարի վրա կատարվում են հետևյալ գրառումները՝
  - մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված մրցույթի հայտի ներկայացման վայրը (հասցեն).
  - մրցույթի անվանումը.
  - «մրցույթի պայմաններ» բառերը.
  - «չբացել մինչև մրցույթի հայտերի բացման նիստը» բառերը.
  - մասնակցի անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը կամ կապի այլ միջոցները:
17. Մրցույթի հայտի առաջին ծրարով ներկայացվում են միայն հրապարակային մրցույթի մասնակցի կողմից առաջարկվող մրցույթի տեխնիկական պայմանները:
18. Մրցույթի հայտի երկրորդ ծրարի վրա կատարվում են հետևյալ գրառումները՝
  - մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված մրցույթի հայտի ներկայացման վայրը (հասցեն).
  - մրցույթի անվանումը.

- «չբացել մինչև մրցույթի հայտերի բացման նիստը» բառերը.
  - մասնակցի անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը կամ կապի այլ միջոցները:
19. Մրցույթի հայտի երկրորդ ծրարով ներկայացվում են հրապարակային ծանուցմամբ պահանջվող ֆինանսական կողմերին վերաբերվող առաջարկությունները, ինչպես նաև այլ տեղեկություններ և փաստաթղթերը:
20. Մրցույթի հայտի ընդունումը ձևակերպվում է մրցույթի մասնակցին մրցույթի հայտն ընդունելու մասին տրամադրվող համապատասխան ստորագրված և կնքված տեղեկանքով, որում նշվում է՝ մասնակցի անվանումը, հայտի ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը, հայտն ընդունող աշխատակցի անունը, ազգանունը և պաշտոնը:
21. Մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են մրցույթի հայտերը ընկերություն ուղարկել պատվիրված նամակով: Պատվիրված նամակով հայտը ներկայացնելու դեպքում մրցութային հայտն ընդունելու մասին համապատասխան տեղեկանքը մրցույթի մասնակցին ուղարկվում է փոստի ծառայության միջոցով:
22. Մրցույթի մասնակիցների մրցութային հայտերը մրցութային հանձնաժողովի նիստում հանձնվում են մրցութային հանձնաժողովի նախագահին:

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

23. Մրցույթին մասնակցելու համար աուդիտորական կազմակերպությունը պարտադիր ներկայացնում է՝
- իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի պատճենը.
  - պետական լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորական գործունեության վերաբերյալ լիցենզիայի պատճենը.
  - «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետով ամրագրված հայտանիշների վերաբերյալ տեղեկանք:
24. Մրցույթի մասնակիցների կողմից հրապարակային մրցույթին մասնակցելու հայտի առաջին ծրարով ներկայացվում են՝
- մրցույթի մասնակցի անվանումը, գտնվելու վայրը (հասցեն), հեռախոսահամարը.
  - լիցենզիայի ռեկվիզիտները.
  - աուդիտի ընդգրկման բնագավառները.
  - տվյալ կազմակերպության կողմից աուդիտի անցկացման փորձի մասին տեղեկություններ.
  - աուդիտի անցկացման փորձի մասին տեղեկություններ.
  - ներկայացուցչությունների, մասնաձյուղերի կամ դուստր ձեռնարկությունների առկայության վերաբերյալ տեղեկություն.
  - աուդիտի աշխատանքներին մասնակցող աշխատակիցների որակավորման մակարդակի և աշխատանքային փորձի վերաբերյալ տեղեկություններ.
  - աուդիտի իրականացման և աուդիտորական եզրակացության ներկայացման ժամկետները.
  - այլ անհրաժեշտ տվյալներ և փաստաթղթեր՝ մրցույթի կազմակերպչի հայեցողությամբ:
25. Հրապարակային մրցույթի մասնակիցների կողմից հրապարակային մրցույթին մասնակցելու հայտի երկրորդ ծրարում պետք է ներկայացվեն.
- աուդիտորական ծառայության մատուցման արժեքը՝ ներառյալ հարկերը.
  - այլ ծախսերը:
26. Սույն կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող մրցույթի հայտերը՝ ծրարներին, մրցույթի հայտերի ներկայացման ժամկետներին, ինչպես նաև մրցույթի հայտերով ներկայացման ենթակա տեղեկություններին և փաստաթղթերին ներկայացվող պահանջներին չհամապատասխանող հայտերը, մրցութային հանձնաժողովի որոշմամբ մերժվում են, իսկ մերժված հայտերը սահմանված կարգով պահվում են Ընկերությունում:
27. Ընկերությունը պատասխանատու չէ մրցույթի մասնակիցների այն ծախսերի համար, որոնք պայմանավորված են մրցույթի նախապատրաստման և հայտերի ուղարկման համար՝ անկախ մրցույթի արդյունքներից:
28. Մրցույթի մասնակիցները մինչև մրցույթի հայտերը ներկայացնելու վերջնական ժամկետի ավարտը կարող են փոխել կամ հետ վերցնել հայտերը: Մրցույթի հայտի փոփոխումը կատարվում է սույն կանոնակարգով սահմանված մրցույթի հայտ ներկայացնելու համար նախատեսված կարգով՝ համապատասխան ծրարի վրա ավելացնելով «փոփոխում է» բառը:

## ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄԸ

29. Հրապարակային մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվում են մրցութային հանձնաժողովի հատուկ նիստում՝ մրցույթի մասին հրապարակային ծանուցմամբ նախատեսված օրը և ժամին, բայց ոչ շուտ քան մրցույթի հայտերն ընդունելու վերջին օրվանից երեք օր հետո:
30. Մրցութային առաջարկությունները գնահատելիս, առաջինը բացվում է աուդիտորական ծառայության տեխնիկական կողմին վերաբերող առաջարկությունները: Եթե առաջին փաթեթում ներառված տեխնիկական առաջարկությունները բավարարում են բանկի կողմից սահմանված տեխնիկական պայմաններին, ապա բացվում է երկրորդ փաթեթը: Հակառակ դեպքում, մրցութային առաջարկությունը համարվում է մերժված:
31. Մրցույթի հայտերը բացելուց հետո մրցութային հանձնաժողովը մրցույթի հայտերում նշված տեղեկությունների հիման վրա պատրաստում է համապատասխան տեղեկանք, որում նշվում են մրցույթի յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հրապարակային մրցույթի պայմանները (կնքվելիք պայմանագրի էական պայմանները) և այլ անհրաժեշտ տեղեկություններ:
32. Մրցույթի հայտերի բացման նիստում հրապարակվում են՝
  - ամփոփ տեղեկանքը.
  - մրցույթի հայտը ներկայացրած յուրաքանչյուր անձի անվանումը.
  - մրցույթի հայտեր ներկայացնելու ժամկետների և հայտերի ծրարների վրա կատարված գրառումների համապատասխանությունը սույն կանոնակարգի և մրցույթի մասին հրապարակային ծանուցման պահանջներին.
  - ամփոփ տվյալներ՝ մրցույթի հայտերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:
33. Սույն կանոնակարգի Հավելված 2-ով սահմանվում են մրցութային առաջարկությունների գնահատման մեթոդը: Աուդիտորական կազմակերպության ընտրության ժամանակ առավելությունը տրվում է առավելագույն միավոր հավաքած ընկերությանը:
34. Մրցութային հանձնաժողովը սույն կանոնակարգի 31-րդ կետում նշված տեղեկանքը 15 օրյա ժամկետում տրամադրում է Ընկերության Խորհրդին, որի հիման վրա ընկերության Խորհուրդն ընտրում է առաջարկված մրցութային պայմաններից լավագույնը և ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովին 31-րդ կետում նշված տեղեկանքի հետ միասին ներկայացնում է առաջարկություն՝ մրցույթի հաղթողին որոշելու և Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձին հաստատելու համար: Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձին հաստատելու մասին որոշումը կայացնում է ընկերության Խորհրդի առաջարկությունը ստանալուց հետո 30 օրյա ժամկետում:
35. Մրցույթի հայտերն ամփոփելու օրը մրցութային հանձնաժողովը կազմում է մրցույթի արդյունքների մասին արձանագրություն, որտեղ նշվում են՝
  - մրցույթի հայտերի բացման, ինչպես նաև մրցույթի հայտերի ամփոփման վայրը, ամսաթիվը և ժամը, ինչպես նաև մրցութային հանձնաժողովի անդամների, նիստին մասնակցող հրավիրված անձանց անունները, ազգանունները և պաշտոնները.
  - մրցույթի մասնակիցների անվանումները, հասցեները և գտնվելու վայրը.
  - մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումների և դրանց պատասխանների մասին տեղեկություններ.
  - այլ անհրաժեշտ տեղեկություններ:
36. Մրցույթի հաղթող ճանաչված և Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատված մասնակցի հետ կնքվում է Աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագիր:

## ԶԿԱՅԱՑԱԾ ԵՎ ԱՆԿԱՎԵՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ

37. Մրցութային հանձնաժողովը չկայացած (անվավեր) է համարում մրցույթը, եթե՝
  - ոչ մի հայտ չի ներկայացվել.
  - ներկայացված հայտերից ոչ մեկը չի համապատասխանում մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված պահանջներին:
38. Ընկերությունը յուրաքանչյուր չկայացած մրցույթից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում սույն կանոնակարգով սահմանված կարգով կրկնակի մրցույթ անցկացնելու վերաբերյալ հայտարարություն է հրապարակում:
39. Մրցութային հանձնաժողովը մրցույթը չկայացած (անվավեր) ճանաչելու և կրկնակի մրցույթ անցկացնելու վերաբերյալ հայտարարություն հրապարակելու մասին երկօրյա ժամկետում հայտնում է ընկերության Խորհրդին:



## ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

40. Ընկերությունը պարտավոր է վարել փաստաթղթային գրառումներ (արձանագրել մրցութային հանձնաժողովի նիստերը) և պահպանել հրապարակային մրցույթի հետ կապված փաստաթղթերը (պայմանագրերը, արձանագրությունները և այլն):



**Հավելված 1**

**Մրցութային հանձնաժողովի կազմը**

Հանձնաժողովի նախագահ՝	–	ընկերության Խորհրդի անդամ
Հանձնաժողովի անդամներ՝	–	ընկերության Խորհրդի անդամ
	–	ընկերության Գլխավոր տնօրեն
	–	ընկերության վերստուգող հանձնաժողովի նախագահ
	–	ընկերության Ներքին աուդիտի ղեկավար

**Հավելված 2**

**Մրցութային առաջարկությունների գնահատման մեթոդը**

Մրցութային առաջարկությունների գնահատման մեթոդը					Սեկնաբանություն
	Մրցութային առաջարկների գնահատման չափանիշներ	Կշիռ	Միավոր	Ընդամենը	(Գնահատվում է եռաստիճան սանդղակով՝ 0-ից 3 միավոր, ընդ որում, ամենաբարձր միավորը 3-ն է)
<b>Տեխնիկական չափանիշներ</b>	Աուդիտորական կազմակերպության ՀՀ-ում և ԼՂՀ-ում ձանաչվածության աստիճանը (հեղինակությունը)				<ul style="list-style-type: none"> <li>- չկա բացասական կարծիք՝ 3 միավոր,</li> <li>- կան դիտողություններ՝ 2 միավոր,</li> <li>- կարծիք չկա՝ 1 միավոր,</li> <li>- բացասական կարծիքի դեպքում՝ 0 միավոր:</li> </ul>
	Աուդիտորական կազմակերպության միջազգային ձանաչումը (հեղինակությունը)				<ul style="list-style-type: none"> <li>- միջազգային ձանաչում ունեցող (միջազգային ռեյտինգավորմամբ ընդունված լավագույն 10 աուդիտորական կազմակերպությունների շարքից)՝ 3 միավոր,</li> <li>- միջազգային գործունեություն ծավալող (չի մտնում միջազգային ռեյտինգավորմամբ լավագույն 10-ի մեջ)՝ 2 միավոր,</li> <li>- աշխատում է միայն ՀՀ-ում՝ 1 միավոր:</li> </ul>
	Տվյալ աուդիտորական կազմակերպության աշխատանքային փորձը				<ul style="list-style-type: none"> <li>- 10-ից բարձր՝ 3 միավոր,</li> <li>- 5-10 տարի՝ 2 միավոր,</li> <li>- 3-5 տարի՝ 1 միավոր:</li> </ul>
	Աուդիտի աշխատանքների մասնակցող աշխատակիցների որակավորման մակարդակը և աշխատանքային փորձը				<ul style="list-style-type: none"> <li>- ՀՀ-ում որակավորված և վերապատրաստված՝ 1 միավոր,</li> <li>- արտերկրներում որակավորված և վերապատրաստված՝ 1,5 միավոր,</li> <li>- ՀՀ-ում և արտերկրներում ջրակավորված և վերապատրաստված՝ 3 միավոր:</li> </ul>





--	--	--	--	--	--



	Աուդիտորական ստուգման իրականացման մեթոդները			<ul style="list-style-type: none"> <li>- ՀՀ-ում օգտագործվող մեթոդները՝ 1 միավոր,</li> <li>- արտերկրներում օգտագործվող մեթոդները՝ 1.5 միավոր,</li> <li>- ՀՀ-ում և արտերկրներում օգտագործվող մեթոդները՝ 3 միավոր:</li> </ul>
	աուդիտի անցկացման և աուդիտորական եզրակացության ներկայացման ժամկետները			<ul style="list-style-type: none"> <li>- մինչև հաջորդ տարվա մարտի 30-ը՝ 1 միավոր,</li> <li>- մինչև հաջորդ տարվա մարտի 20-ը՝ 2 միավոր,</li> <li>- մինչև հաջորդ տարվա մարտի 10-ը՝ 3 միավոր:</li> </ul>
	աուդիտի ընդգրկման բնագավառները			<ul style="list-style-type: none"> <li>- ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում՝ 1 միավոր,</li> <li>- ընկերության կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգում՝ 1 միավոր,</li> <li>- ընկերության կողմից ՀՀ հարկային պետական ծառայություն ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգում՝ 1 միավոր,</li> <li>- ընկերության կողմից ռիսկերի կառավարման համակարգի գնահատում՝ 1 միավոր,</li> <li>- ընկերության կողմից «ընկերությունների ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններ»-ին համապատասխանության ստուգում՝ 1 միավոր,</li> <li>- Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և սահբեկչության ֆինանսավորման դեմ պայքարում ՀՀ օրենսդրության պահանջներին ընկերության գործունեության համապատասխանության ստուգում՝ 1 միավոր:</li> </ul> <p><i>/աուդիտի ընդգրկման բնագավառներից յուրաքանչյուրի համար սահմանված միավորները գումարվում են/</i></p>
<b>Ընդամենը</b>		100		



Ֆինանսական չափանիշներ	Աուդիտի ծառայության արժեքը՝ ներառյալ այլ ծախսերը և հարկերը				<ul style="list-style-type: none"> <li>- 8.000.001 և ավելի ՀՀ դրամ՝ 0-ից 0,3 միավոր,</li> <li>- 5.000.001 - 8.000.000 ՀՀ դրամ՝ 0,4-ից 0,7 միավոր,</li> <li>- մինչև 5.000.000 ՀՀ դրամը՝ 0,8-ից 1 միավոր:</li> </ul>
<b>Ընդամենը</b>		100			
<b>Նշել աուդիտ արժեքը</b>					
<b>Անկողի գնահատականը</b>					
Տեխնիկական չափանիշներ					
Ֆինանսական չափանիշներ					
<b>Վերջնական միավոր</b>					